# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՋ

# ՀՐԱՄԱՆ № 98-Լ

«04» 12 2024թ. ք. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՋԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի N 39-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Արթուր Պողոսյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին ՀՀ գլխավոր դատախազի՝ 2024 թվականի նոյեմբերի 28-ի N 442-Ա հրամանը, Արամ Էռնեստի Արամյանին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնին նշանակելու մասին ՀՀ գլխավոր դատախազի՝ 2024 թվականի դեկտեմբերի 3-ի N 447-Ա հրամանը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 11-րդ կետերով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հ ր ա մ ա յ ու մ ե մ՝**

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության արխիվային փաստաթղթերը փորձաքննությամբ արժեքավորելու և Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի կազմում ընդգրկելու համար փորձագիտական հանձնաժողով ստեղծելու, արժեքավորելու կարգը սահմանելու ու Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2019 թվականի դեկտեմբերի 18-ի N 71 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2023 թվականի ապրիլի 28-ի N 39-Լ հրամանի 5-րդ կետում «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Արթուր Պողոսյանը» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Արամ Արամյանը» բառերով:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ